ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 13 » 06 2025թ. ք. Երևան № 190-Ա

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 248-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 12-ին անցկացված վիճակահանության արդյունքները՝

Հրամայում եմ՝

1. Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի անդամ նշանակել Հակակոռուպցիոն կոմիտեի ընտրական, ինչպես նաև մասնավոր ոլորտում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետ Գարեգին Վլադիմիրի Բեգոյանին՝ երեք տարի ժամկետով:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամներին նշանակելու և անհատական կազմը սահմանելու մասին» N 248-Ա հրամանով սահմանված հավելվածի «Գագիկ Համբարձումյան Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ (նշանակվել է 3 տարի ժամկետով՝ մինչև 28.09.2027թ. ներառյալ)» բառերը փոխարինել «Գարեգին Վլադիմիրի Բեգոյան Հակակոռուպցիոն կոմիտեի ընտրական, ինչպես նաև մասնավոր ոլորտում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության

վարչության պետ (նշանակվել է 3 տարի ժամկետով՝ մինչև 14.06.2028թ. ներառյալ)» բառերով:

3. Անձնակազմի կառավարման վարչության պետին՝ սույն հրամանը ծանոթացնել Հանձնաժողովի անդամներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

13.06.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ